ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1953 Общественные науки

Ալ. Սահինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հայկական կլասիկ ճարտարապետության առայժմ մեզ հայտնի հնագույն հուշարձանները հանդիսանում են քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքները։

Այդ կառուցվածքները ընորոշում են միջնադարյան հայ ճարտարապետության ամենակարևորագույն շրջաններից մեկը, որի ուսումնասիրությամբ հնարավոր է լույս սփռել ճարտարապետական մի շարք ձևերի, կառուցվածքների առանձին տիպերի առաջացման ու կազմավորման հարցերի վրա։ Հիմնականում նրանց ուսումնասիրությամբ է, որ հնարավոր է թափանցել ճարտարապետական ավելի խոր անցյալը և բացահայտել հայկական ճարտարապետության զարգացման ակունքները։ Այս կառուցվածքների վերաբերյալ, բացի մի քանի հետազոտողների առանձին դիտողություններից և Թորամանյանի «Տեկորի տաճարը» աշխատությունից, մինչև այժմ հրապարակված հատուկ ուսումնասիրություն չկա։

Բուրժուական գիտությունը մի ժամանակ Հայաստանի ճարտարապետությունը ամբողջապես համարում էր բյուզանդական (Ռիլ)[2]։ Հետագայում փաստերի ճնշման տակ նեղացնելով այդ սահմանները, փորձ արվեց ժխտել հայկական ճարտարապետության գոյությունը մինչև 7-րդ դարը, դիտելով այդ շրջանի կառուցվածքները որպես հռոմեական և բյուզանդական ճարտարապետության օրինակներ (Ստրժիգովսկի[3], Կոնդակով[4])։

Երբ հերքվեցին նաև այդ անհիմն տեսակետները, բուրժուական այդ գիտնականները սկսեցին օտարամուտ համարել Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքները։ Ընդորում այս անդամ հայկական կառուցվածքների «նախահայրենիքների» շարքում առաջ քաշվեցին նաև Սիրիան, Փոքր Ասիան և Միջագետքը[5]։ Չնայած ճարտարապետ Թորամանյանը Տեկորի տաճարի ուսումնասիրության մեջ և տարբեր առիթներով այդ կառուցվածքները իրավացիորեն կապում էր Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի արվեստի հետ, սակայն, ըստ էության, անտեսված է այդ տեսակետը և հուշարձանների այս խմբի ճարտարապետության արժեքավորման ասպարեզում շփոթ գոյություն ունի նաև որոշ սովետական գիտնականների մոտ։ Այդ շփոթը ստեղծվել է Ն. Մառի սխալ տեսակետների կրկնման հետևանքով և արմատավորվել է սովետական ճարտարապետական գիտության մեջ։

Հայտնի է, որ քրիստոնեությունը Հայաստան է թափանցել Սիրիայից։ Մառը, ելնելով դրանից, Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքները և հատկապես նրանց հարդարանքները համեմատում է սիրիական համանման հուշարձանների հետ և հայտնում այն միտքը, թե այդ կառուցվածքները (Երերուք, Տեկոր և այլն) հանդիսանում են 5-րդ դարի վերջի կամ 6-րդ դարի սկզբի գործեր և իրենց ընդհանուր հո-

---

1 Վերջերս Դվինի կաթուղիկեի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություն է կատարել ընկ. Կ. Ղաֆադարյանը՝ իր «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության մեջ, Երևան, 1952։

2 Charles Diehl, Etudes byzantines, Paris, 1905, p. 172.

3 J. Strzygowski, Byzantinische Denkmaler, Wien, 1891, I, 14.

4 Н. П. Кондаков, Русская древности в памятниках искусства, СПБ, 1891 IV, 37—38.

5 Heinrich Glück, Die hellenistische Uberlieferung: Das tonnengewölbte Langhaus, գետեղված Հ. Ստրժիգովսկու „Die Baukunst der Armenier und Europa" աշխատության առաջին հատորում, 373—419։

ինվածքով ու մանրամասներով կապված են «հայկական եկեղեցական կյանքի սիրիական հոսանքի հետ»[1] և անվիճելիորեն ունեն «սիրիական ծագում»։

Գրեթե կես դար իբրև բացարձակ ճշմարտություն կրկնվել ու նույնիսկ այժմ էլ կրկնվում են Մառի սխալ տեսակետները, որոնք ոչ միայն փորձում են ամբողջապես ժխտել քրիստոնեական կրոնի ընդունումից առաջ Հայաստանում եղած ճարտարապետական արվեստի գոյության փաստը, այլև մթագնում են հայկական կլասիկ ճարտարապետության ծագման ու նրա հետագա զարգացման պատկերը։

Այսպես, ՍՍՌՄ Ճարտարապետության ակադեմիայի թղթակից անդամ Ն. Իրունովը, ելնելով Մառի տեսակետներից, հայկական կառուցվածքները սիրիականի հետ մեկտեղ դասելով «բյուզանդական ճարտարապետության արևելյան դպրոցի» շարքում, գրում է. „Базилика в Эреруке... имеет сирийскую основу, осложненную элементами, заимствованными из архитектуры Персии. Преобладание массы, *теска камней, общая схема здания—все указывает на Сирию, как на источник форм самых ранних кавказских монументальных зданий...*"[3] (ընդգծումն իմն է—Ա. Ս.)։

Ստացվում է այնպես, որ կարծես թե մինչև քրիստոնեական կրոնի ընդունումը, կովկասյան ժողովուրդները անծանոթ են եղել անդամ քարի տաշման, քարի մշակման արվեստին։

Ն. Տոկարսկին գրում է. „Сирийские истоки христианства в Армении наложили отпечаток и на первые церковные сооружения. Зодчие вначале строят базилики *со всеми особенностями, характерными для сирийских безкупольных церквей*"[4] (ընդգծումն իմն է—Ա. Ս.)։

Նույն տեսակետը տարբեր ձևով կրկնվում է հայկական ճարտարապետությանը նվիրված այլ հրատարակություններում։ Այդ տեսակետից առավել ուշագրավ է Ա. Յակոբսոնի աշխատությունը։ Յակոբսոնը չնայած նշում է սիրիական կառուցվածքների համեմատությամբ հայկականի (Երերուքի) ճարտարապետական առանձին ձևերի յուրահատկությունը, սակայն, երբ անցնում է հուշարձանների վերլուծությանը, ըստ էության թե ողջ կոմպոզիցիայի ճարտարապետական ձևերը, և թե մանրամասերն ու հարդարանքները դիտում է իբրև սիրիական։ Ընդ որում, երբ ճարտարապետական որոշ ձևերը ամբողջապես հնարավոր չեն լինում բացատրել սիրիական ազդեցությամբ, աշխատում է դա էլ ներկայացնել իբրև փոքր-ասիական։

Նա նույնը տարածում է նաև վրացական նույն ժամանակաշրջանի հուշարձանների վրա։ „Подобные базилики строились в то время и в соседней Грузии... Таковы Болнийский Сион, базилики в Урбниси, Урнатубани и др. Однако *все эти базиличные формы, связанные с архитектурой Сирии и Малой Азии, не привились в Армении и в Грузии; они остались чуждыми и в дальнейшем отпали. Зодчих Закавказья влекло к иным архитектурным идеям*"[7] (ընդգծումն իմն է—Ա. Ս.)։

Հայկական կառուցվածքների սիրիական ծագումը ցույց տվող գրեթե բոլոր հեղինակները իբրև ապացույց հիշատակում են Երերուքի բազիլիկան[8]։

---

[1] Марр Н. Я., Ереруйская базилика, армянский храм V—VI веков. ЗВО имп. русского арх. общества, т. XVIII, С.-Петербург, 1908, стр. XIII.

[2] Марр Н. Я, Новые археологические данные о постройках типа Ереруйской базилики, ЗВО имп. русск. археолог. общества, том XIX, С.-Петербург, 1909, стр. 064, В. А. Миханкова, Николай Яковлевич Марр, М.-Л. 1935, 99—100 և այլն։

[3] Н. Брунов, Очерки по истории архитектуры, М.-Л., 1935, т. II, 470.

[4] Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, 49.

[5] Н. Г. Буниатов, Ю. С. Яралов, Архитектура Армении, Москва, 1950, 32—33, А Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, Москва—Ленинград, 1950, 13, 17.

[6] А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении..., 12—13.

[7] А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, Москва—Ленинград, 1950, 17.

[8] Н. М. Токарский, Архит. древней Армении, 51, Н. Г. Буниатов, Ю. С. Яралов, Архитектура Армении, 32—33, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, 13, 17.

Երերուքի այժմյան հորինվածքը (եռանավ գահլիճ, արևելյան կողմում կիսաշրջանաձև աբսիդ, արևմտյան ճակատում աշտարակաձև երկհարկանի երկու սենյակների միջև ստեղծված նախասրահ, հյուսիսային և հարավային ճակատներում արտաքին սյունասրահներ և այլն) համեմատելով սիրիական համանման կառուցվածքների հետ, եզրակացվում է տվյալ հուշարձանի և հայկական նույնատիպ բոլոր կառուցվածքների օտարամուտ լինելու մասին։ Այս եզրակացությունները հապճեպ են և սխալ։

Ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝ սիրիական ճարտարապետության համար հատկանշական ճարտարապետական ձևերի խոշորագույն մասը ու հարդարանքները թե Երերուքում և թե Հայաստանի համանման առավել հնագույն կառուցվածքներում, հանդես են գալիս իբրև հետագա հավելվածքներ։ Առանց այդ հավելվածքների լուն շենքերը ստանում են միանգամայն պարզ տեսք և դրանով իսկ հեռանում սիրիական ճարտարապետությունից մշտապես օրինակ բերվող կառուցվածքներից (Տուրմանին, Կալբ-Լուզե)։

Ի հարկն կասկածից վեր է քրիստոնեական վաղ շրջանի համար բնորոշ այն ընդհանրությունը, որ գոյություն ունի սիրիական, փոքր-ասիական, հայկական և ընդհանրապես կովկասյան ժողովուրդների ճարտարապետական արվեստում։ Սակայն, մինչև քրիստոնեության կրոնի հետևանքով առաջացած այդ ընդհանրությունը, այդ ժողովուրդներից յուրաքանչյուրի մոտ գոյություն են ունեցել նախաքրիստոնեական շրջանից եկող ճարտարապետական արվեստի տեղական նախադրյալներ։ Այդ են ապացուցում ոչ միայն գրավոր վկայությունները, այլև իրենց՝ հուշարձանների առավել ուշադիր ուսումնասիրությունը, մի բան, որ անտեսել է Մառը և անտեսում են նրան կրկնողները։

Վերոհիշյալ սխալ տեսակետների հերքման համար դիմենք կոնկրետ հուշարձաններին, բացահայտենք նրանց նախնական պարզ ձևերը, աստիճանական կազմավորումն ու հետագա զարգացման ընթացքը։

1. ՔԱՍԱՂԻ ԲԱԶԻԼԻԿԱՆ

Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքների սկզբնական տեսքի ըմբռնման տեսակետից. Թորամանյանը իրավամբ առաջնությունը տալիս է Քասաղի բազիլիկային, որովհետև «...Քասաղի եկեղեցին ավելի նախնական վիճակի մեջ մնացած է, քան Տեկորի և Երերուքի տաճարները»[1]։

Քասաղի բազիլիկան հանդիսանում է թաղակապ ծածկով եռանավ կառուցվածք, որպիսի հուշարձանը համարվում է «բազիլիկաների արևելյան տիպ» կամ անվանվում «սրահաձև եկեղեցի»։ Հուշարձանը ներկայումս գտնվում է կիսավեր վիճակում։ Պահպանված են կառուցվածքի արտաքին պատերը, աբսիդի բազմանիստ ծավալը, գլխավոր նավի հարավային կամարաշարքը, հյուսիսային ճակատում ունեցած օժանդակ սենյակի և կամարակապ սրահի մնացորդները (նկ. նկ. 1, 2, 3)։

Հուշարձանի շրջապատում 1944—1947 թթ. մեր կատարած պեղումները ոչ միայն հնարավորություն ընձեռեցին հայկական կլասիկ ճարտարապետության այդ կարևորագույն նմուշի նախնական տեսքի վերակազմության նախագծի կազմելուն, այլև առավել ցայտուն կերպով դրսևորեցին քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքների սկզբնական պարզ ձևից ավելի բարդ ձևին անցնելու պատկերը։

Այսպես, 1. Քասաղի բազիլիկայի այժմյան արտաքուստ բազմանիստ, ներքուստ պայտաձև հատակագծով աբսիդը իրավամբ համարվում է Հայաստանի համանման կառուցվածքների ամենահնագույններից մեկը[2]։ Նրա այժմյան դմբեթարքը կառուցվել է տաճարի 1877 թ. վերակառուցման ժամանակ, իսկ մնացած առավել հնագույն մասում նկատվում է հետևյալ ուշագրավ պատկերը.

ա) Աբսիդի ուղիղ սկզբների որմաշարերը, հասնելով կորագիծ խորշին, ընդհատվում են։ Կորագիծ մասում սկսվում են տարբեր քանակի ու տարբեր բարձրություններ

---

1 Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, 76—77։

2 Թ. Թորամանյանը խոսելով Քասաղի այժմյան աբսիդի մասին, գրում է. «...կարելի է կարծել, որ սկզբնական օրինակներ են եղած լինի abside-ի և նախատիպ 3-րդ դարու վերջին կանգնվող էջմիածնի կաթուղիկեին չորս abside-ներուն», հատ I, էջ 211։

ունեցող նոր որմաշարքեր, որոնց հետևանքով արսիդի կորագիծ մասը հավելվածքի նման կցվում է արսիդի ուղիղ սկզբներին[1]։

բ) Որոշակի տարբերություն կա արսիդի հիմքերի և բազիլիկայի մյուս պատերի հիմքերի կառուցվածքների միջև։ Բազիլիկայի պատերի հիմքերը վերին մասում հավասար են պատի հաստությանը, իսկ ներքևում՝ թե ներսից և թե արտաքինից (ստիլոբատի ներքին աստիճանի ուղղաձիգ մակերեսից) ունեն 15—20 սմ ելուն։ Արսիդի հիմքերը ներսի կողմում ելուն չունեն, իսկ արտաքինից մերթ կգալի չափով ելնում են արսիդի ստիլոբատի աստիճաններից դուրս, մերթ, ընդհակառակը, աստիճաններն են կախվում հիմքերի վրա։



Նկ. 1. Քասագի բազիլիկայի հատակագիծը։
Չափագր. Ալ. Սահինյանի

գ) Բազիլիկայի պատերի հիմքերի շաղախը ունի շատ մեծ կարծրություն, իսկ արսիդում անհամեմատ թույլ։

դ) Բազիլիկայի ստիլոբատի աստիճանները մյուս ճակատներում կազմում են միմյանց շարունակություններ, իսկ արսիդի ստիլոբատի աստիճանների հանդիպման հանգույցներում ընդհատվում են։

[1] Թորամանյանը իր չափագրություններում այդ մասը չի չափագրել։ «Նյութեր հայ ճարտարապետության պատմության», հատ. Ա, էջ 113, նկ. 60։



Նկ. 2. Քասագի բազիլիկայի ընդերկայնական կտրվածքը
Վերակազմությունն Ալ. Սահինյանի

ե) Տարբեր կազմություն ունեն բազիլիկայի և արսիդի պատերում գործածված շաղախները։ Բազիլիկայի պատերի շաղախի մեջ իբրև խիճ հիմնականում օգտագործված է տուֆաքարը, իսկ արսիդի պատերի շաղախում հանդիպում են մեծ քանակությամբ որձաքար և գետաքար։

զ) Շինարարական որոշակի աննորմալություն գոյություն ունի արսիդի և բազիլիկայի որմնաշարերի արտաքին միացումների մեջ։ Եթե բազիլիկայի մյուս պատերի միացման հանգույցներում որմնաշարքերը մեկընդմեջ կապվում են միմյանց հետ, ապա արսիդի և բազիլիկայի հանդիպման անկյուններում կամ արսիդի որմնաշարքերն են միմյանց ետևից իրենց հարթ մակերեսներով մտնում բազիլիկայի պատի մեջ կամ, ընդհակառակը, բազիլիկայի որմնաշարքերն են միմյանց ետևից մաքուր տաշված մակերեսներով մտնում արսիդի պատի մեջ։

է) Զգալի տարբերություն կա բազիլիկայի և արսիդի երեսապատման քարերի հոդամահարվածության աստիճանի միջև։

ը) Բազիլիկայի պատերի բոլոր երեսներում օգտագործված է նույն սև տուֆաքարը, իսկ արսիդի բազմանկյան վրա օգտագործված են նաև բաց վարդագույն քարեր։

թ) Արսիդի –ինչպես հորիզոնական գոտու, այնպես էլ բազմանկյան պարագծով ընթացող ընդհանուր խարիսխի միացումը բազիլիկայի պատի հետ օրգանական չէ։

Այս փաստերը ակնառու ցույց են տալիս, որ Դասաղի այժմյան արսիդը (չնայած նրա կառուցվածքի հնագույն բնույթին), ժամանակակից չէ բազիլիկայի եռանավ մասի կառուցվածքին[1]։ Թե ինչպիսի տեսք է ունեցել նախնական առավել հնագույն արսիդը, ստույգ դժվար է ասել։ Մենք կարծում ենք, որ այն ունեցել է քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքներում հանդիպող ուղղանկյան ձև։

2. Արևմտյան ճակատի ուղղաձիգ առանցքի վրա գոյություն ունի սյունադարդ շքամուտք (նկ. նկ. 1, 3)։ Շքամուտքի թե գույց կիսասյուների ընդհանուր խարիսխները, թե նրանց վրայից ելնող կիսասյուների բոլոր քարերն անխտիր, թե այդ կիսասյուներից սկզբնավորվող պայտաձև կամարի ամենապատասխանատու մասը հանդիսացող կրունկի քարերը և թե ամբողջ ճակտոնը, առանց շինարարական կապի՝ հպված են եղել տաճարի պատի հարթ մակերեսին, ծածկելով նույնիսկ մուտքի վերը գտնվող լուսամուտի ներքին կեսը։ Նշանակում է բազիլիկայի պատն ու նրա վրա գտնվող լուսամուտը գոյություն է ունեցել մինչ սյունադարդ կառուցվածքի հանդես գալը և վերջինը բազիլիկայի եռանավ մասի նկատմամբ հանդիսանում է հետագա հավելվածք։ Նույնպիսի կառուցվածքներ ունեն նաև հարավային ճակատում գտնվող շքամուտքերը։

3. Ուշագրավ է նաև հյուսիսային ճակատին կից սենյակը (նկ. 1)։

ա) Եթե բազիլիկայի եռանավ մասի պատերի միացման հանգույցները կազմում են ճիշտ 90 աստիճանի անկյուններ, ապա սենյակի անկյունները ունեն խիստ շեշտված սուր կամ բութ կառուցվածք։

բ) Բազիլիկայի հիմքերը ներսից՝ պատերի հաստության համեմատությամբ, ունեն ելուններ (обрез-ներ), մինչդեռ սենյակի հիմքերը կառուցված են միայն պատի լայնության հավասար։

գ) Բազիլիկայի պատին հպված սենյակի թաղակիր կամարի մնացորդները ցույց են տալիս, որ սենյակի թաղակապ ծածկը, առանց կապի ուղղակի կպցված է եղել բազիլիկայի պատին։ Նման պատկեր գոյություն ունի նաև կամարից ցած գտնվող որմնաշարքերում, որի հետևանքով թաղի գագաթից դեպի ներքի՝ յոթ շարք անընդհատ, պարզապես հպված են բազիլիկայի պատի հարթությանը։

դ) Բազիլիկայից դեպի սենյակ բացվող դուռը իր շրջապատի որմնաշարքերով կարկատանի նման անջատվում է բազիլիկայի պատի հարթության մյուս հատվածից։

ե) Բազիլիկայի և սենյակի միացման արևելյան հանգույցում սենյակի վերին երկու շարքերի տակ, բազիլիկայի պատի վրա բացվեցին ներկի հետքեր։ Ներկն այնքան լավ է պահպանված, որ խոնավացնելու դեպքում պարզ երևում են կարմիր վարդագույն և սպիտակ դեղնավուն գույները։ Կասկածից վեր է, որ մինչ սենյակի պատի կառուցումը տաճարի ներկված պատը արդեն գոյություն է ունեցել։

Վերոհիշյալ փաստերից դժվար չէ հետևեցնել, որ բազիլիկայի հյուսիսային ճակատին

---

[1] Նույն տեսակետը, առանց փաստերը հիշատակելու, տարբեր առիթներով հայտնել է նաև Թ. Թորամանյանը, «Նյութեր...», հատ. 1-ին, էջ 130, 131, 210, 211, 224 և այլուր։



Նկ. 3. Քասպի բազիլիկայի արևմտյան ճակատը։
Վերակազմությունն Ալ. Սահինյանի

կից կառուցված շեղանկյուն հատակագծով սենյակը նույնպես ժամանակակից չէ բազիլիկայի եռանավ մասի կառուցվածքին։

4. Բազիլիկայի շրջապատում կատարված պեղումների ընթացքում հուշարձանի հյուսիսային ճակատին կից բացվեցին կամարակապ մի խոշոր սրահի մնացորդներ։ Սյունասրահը բազիլիկային միանում է հարավային կամարաշարքով, որը ամբողջ ճակատով (սկսած մույթերի խարիսխների ներքին եզրից մինչև թաղակապ ծածկի դագաթը) առանց շինարարական կապի ուղղակի հպված է եղել բազիլիկայի պատի հարթ մակերեսին։ Ակնհայտ է, որ մինչ սյունասրահի կառուցումը բազիլիկան արդեն գոյություն է ունեցել։

5. Հետաքրքրական է բազիլիկային կից սենյակի և նոր բացված միանավ կառուցվածքի միացումը։ Սենյակի պատը միանավ կառուցվածքի հանդիպման կողմում ունի հարթ մակերես, ուր որմնաքարերի եզրերը մշակված են ֆասկաներով և որ ուշադրավ է, պատի վրա երևում են ներկի հետքեր։ Իսկ միանավ կառուցվածքի համապատասխան պատը ներսի կողմից ունենալով սրբատաշ քարերով նորմալ շարվածք, դրսից՝ այսինքն հիշյալ սենյակի պատին միանալու տեղում բաղկացած է միայն շաղախի զանգվածից։ Այդ շաղախը միմյանց է կապում մի կողմից՝ միանավ տաճարի պատի ներսի միակողմանի շարքի քարերը, իսկ մյուս կողմից հիշյալ սենյակի պատը, ծածկելով վերջինիս սրբատաշ քարերով շարված— ֆասկաներով ու՝ ներկի հետքերով ամբողջ ճակատը։

Բնական է, միանավ տաճարի կառուցման ժամանակ բազիլիկային կցված սենյակը արդեն գոյություն է ունեցել, որ վերջինիս պատը կատարելով միանավ տաճարի պատի մի կողմի երեսապատման քարերի դեր, մնացել է նրա շաղախի տակ։

6. Հետագա հավելվածք են նաև սենյակին կից քարե աստիճանները, որոնք ըստ տեղացիների հաղորդման կառուցվել են բազիլիկայի 1877 թ. վերանորոգման ժամանակ։

Այսպիսով Քասաղի եռանավ բազիլիկայի կառուցվածքում հետագա հավելվածքներ են՝

ա) արտաքին սենյակը,

բ) արտաքին կամարակապ սրահը,

գ) հյուսիսային ճակատի քարե մասսիվ աստիճանները,

դ) շքամուտքերի սյունազարդ կառուցվածքները,

ե) արսիդի այժմյան—արտաքինից բազմանիստ, ներքուստ պայտաձև կառուցվածքը,

զ) հյուսիսային կողմի միանավ կառուցվածքը։ Նշանակում է Քասաղի բազիլիկայի այժմյան կառուցվածքը կազմավորվել է աստիճանաբար և նա սկզբում ունեցել է բոլորովին պարզ կոմպոզիցիա։

Այդ օրինաչափությունը հիմնականում հատուկ է նաև նույն ժամանակաշրջանի համանման մյուս կառուցվածքներին։

2. ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

Թորամանյանի «Տեկորի տաճարը» մոնոգրաֆիկ ուսումնասիրության մեջ ցույց է տրված, որ Տեկորի տաճարի կառուցվածքում տեղի են ունեցել ճիշտ նույն ձևափոխությունների շրջանները, որպիսիք նկատվեց Քասաղում։

Ըստ այդ հետազոտության Տեկորի տաճարի սկզբնական տեսքին հավելված են՝

ա) արտաքին սյունասրահները[1],

բ) այժմյան արսիդի ներքուստ կորագիծ, արտաքինից բազմանիստ ծավալը, արսիդին կից սենյակներով[2],

գ) բոլոր ճակատների շքամուտքերը[3],

դ) հյուսիսային ճակատի արտաքին արսիդը[4],

ե) դմբեթը[5]։

Դժվար չէ նկատել, որ առանց այդ հավելվածքների Տեկորի տաճարի սկզբնական տեսքը նույնպես ստանում է բոլորովին պարզ կառուցվածք, որպիսին ունենք Քասաղում (նկ. 4)։

1 Թ. Թորամանյան, «Նյութեր...», հատ. 1-ին, էջ 131։

2 Նույն տեղում, էջ 197։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 198—201, նույն տեսակետը հայտնում է նաև Ն. Մ. Տոկարսկին (տես „Архитектура древней Армении", 53—54).



Նկ. 4. Տեկորի տաճարի հատակագիծը։
Չափագր. Թ. Թորամանյանի

3. ԵՐԵՐՈՒՔԻ ԲԱԶԻԼԻԿԱՆ

Քրիստոնեական վաղ շրջանի հայկական ճարտարապետության այս նշանավոր հուշարձանի այժմյան բավականին բարդ կոմպոզիցիան ըստ էության անցել է կազմավորման այն շրջանները, ինչ Քասաղը և Տեկորը։

Երերուքի բազիլիկան նույնպես սկզբում իրենից ներկայացրել է համեմատաբար պարզ կառուցվածք, որին տարբեր ժամանակներում ավելացրել են տարբեր հավելվածքներ։

ա) Հետագա հավելվածք է արևմտյան ճակատի նախասրահը։

Արևմտյան ճակատում շքամուտքի երկու կողմերում գտնվող թաղակիր կամարները և նրանց վրայից նախասրահի երկայնությամբ ընթացող որմնաշարքերն առանց շինարարական կասկի ուղղակի կպցված են աղոթասրահի պատին (նկ. նկ. 5, 6, 7)։

Աղոթասրահին կպցված նախասրահի այդ պատը ներկայումս 20—25 սմ թեքվել է դեպի առաջ, որի հետևանքով բացվել են նախասրահի հավելման պատճառով աղոթասրահի ծածկված լուսամուտների ու նրանց բացվածքները երիզող պսակների ուղղաձիգ շարունակությունները։ Եթե նկատի ունենանք նախասրահի թաղի բարձրությունը, դժվար չէ նկատել, որ ճոխ դարդարված հսկայական չափի այդ լուսամուտները պետք է որ ամբողջությամբ մնացած լինեին թաղի շաղախի տակ։

Նախասրահի թաղակիր կամարների դեպի մուտքի կողմը գտնվող մույթերը, որմնաշարքերի մեկ ընդ մեջ կապերով օրդանապես ձուլված են աղոթասրահի պատին։ Այդ



Նկ. 5. Սրբերուքի բազիլիկայի հատակագիծը։
Չափագր. Ալ. Սահինյանի

երևույթը կարող էր կասկած հարուցել նախասրահը հետագայում կցելու վերաբերյալ. սակայն ուշադիր դիտելու դեպքում պարզվում է, որ այդ մույթերը ոչ թե ժամանակակից են նախասրահին, այլ հանդիսանում են բազիլիկայի սկզբնական կառուցվածքին պատկանող որմնասյուների շարունակությունները, որոնց քարերը մի քանի տեղերում տաշելով հարմարեցված են նախասրահի թաղակիր կամարներին։

Այսպիսով, ակնհայտ է, որ նախասրահի թաղի հետևում ծածկված աղոթասրահի լուսամուտները, հետևապես և ամբողջ աղոթասրահի կառուցվածքը, գոյություն է ունեցել ավելի վաղ, քան նրան կցվող նախասրահը[1]։

բ) Աղոթասրահի հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատների պատերի տակից ընթանում է բազիլիկայի սյունասրահների արտաքին պարագծով կառուցված բազմաստիճան ստիլոբատից անկախ — եռաստիճան ստիլոբատ։ Հյուսիսային ճակատում եռաստիճան ստիլոբատի վերին աստիճանը կիսով չափ, իսկ ներքին երկուսը ամբողջությամբ ծածկված են նույն ճակատի ամբողջ երկարությամբ կառուցված սյունասրահի սալահատակով (նկ. 3)։

Եթե սյունասրահի արտաքինից ընթացող բազմաստիճան ստիլոբատի վերին աստիճանը սկսվեր եռաստիճան ստիլոբատի ներքին աստիճանի հորիզոնից, ապա երկու ստիլոբատների միաժամանակ կառուցված լինելը կարող էր որևէ կերպ բացատրվել։ Բայց այստեղ, աղոթասրահին կից եռաստիճան ստիլոբատը ծածկված է և նրա վերին աստիճանի ուղղաձիգ մակերեսի կեսի ուղղությունից կառուցված բազմաստիճան ստիլոբատը։

Կասկածից վեր է, որ աղոթասրահին կից եռաստիճան ստիլոբատը գոյություն է ունեցել ավելի վաղ, քան նրա վրա կառուցված սյունասրահի սալահատակը և այդ սալահատակի հորիզոնից սկսվող արտաքին բազմաստիճան ստիլոբատը։ Այլապես ինչու պետք է եռանավ կառուցվածքին կից ստիլոբատ կառուցվեր, նրա բոլոր աստիճանները մեծ խնամքով մշակվեին և այնուհետև սալահատակի տակ առնվեին։ Նոր ստիլոբատի և սալահատակի հավելումը պետք է դիտել որպես այդտեղ հետագայում ավելացված սյունասրահի կառուցման հետևանք։

Եթե մի պահ ենթադրվի, որ սյունասրահը ժամանակակից է աղոթասրահին ու նրան կից ստիլոբատին, ապա անհասկանալի կմնա նոր բազմաստիճան ստիլոբատի հավելումը։ Իսկ եթե ենթադրվի, որ բազմաստիճան ստիլոբատը ևս ժամանակակից է աղոթասրահին ու նրա եռաստիճան ստիլոբատին, ապա սյունասրահի սկզբնական հատակը կընկներ երկու ստիլոբատների միջև ստեղծված խոր փոսի մեջ, որը կլիներ միանգամայն անիմաստ։ Նշանակում է, թե՛ բազմաստիճան ստիլոբատը, թե՛ եռաստիճան ստիլոբատի վրա կառուցված սալահատակը և թե՛ այդ սալահատակի վրա գտնված սյունասրահը հանդիսանում են մինչև նրանց կառուցումները գոյություն ունեցած աղոթասրահի համեմատությամբ հետագա հավելվածքներ։

Համանման պատկեր գոյություն ունի հարավային ճակատում։

դ) Իրավացիորեն ենթադրվում է, որ հետագա հավելվածքներ են նաև արևմտյան ճակատի սենյակները[2]։ Եվ իրոք արևմտյան ճակատի հարավային սենյակի և աղոթասրահի ստիլոբատների միջև գոյություն ունեցած շինարարական որոշակի խզումը ցույց է տալիս, որ սենյակի ստիլոբատը (սենյակի հետ մեկտեղ) հանդիսանում է նախասրահի նման հետագա հավելվածք։

Ըստ երևույթին նախասրահի ու նրա անկյունային սենյակների կցման ժամանակ սկզբում աղոթասրահի եռաստիճան ստիլոբատին կցվել է այդ սենյակների ստիլոբատը, իսկ ավելի ուշ կառուցվել ընդհանուր շինքի պարագծով ընթացող բազմաստիճան ստիլոբատը։

դ) Ուշագրավ են նաև բազիլիկայի սկզբնական ստիլոբատի և արտաքին արսիդների միացման հանգույցները[3]։

---

1 Այդ նախասրահը հավելվածք է համարում ինչպես Թորամանյանը («Նյութեր...», հատ. 1-ին, էջ 194, 212), այնպես էլ Ն. Տոկարսկին („Арх. древн. Армении", 53).

2 Թ. Թորամանյան, «Նյութեր...», հատ. 1-ին, էջ 121, 132։

3 Դլխավոր արսիդներին զուգահեռ արտաքին արսիդներ հանդիպում ենք Հայաստանի ինչպես միանավ (Դիրաքլար, Գառնի, Էջմիածին), այնպես էլ եռանավ (Տեկոր, Երերուք) հուշարձաններում։

Այդ երկրորդական արսիդները թերևս միջադեպյան կառուցվածքների նման (որպիսի ձևը «մշտապես հանդիպում է Տուր Աբդինի շրջանում») ծառայել են որպես լի օրերի

Նկ. 6. Երերույքի բազիլիկայի արևմտյան հակատը։

Նկ. 7. Երեքուքի բազիլիկայի տեսքը հարավ-արևմուտքից։

Բազիլիկայի սկզբնական ստիլորատի աստիճանները ընդհատվելով հիշյալ արսիդների մոտ, բռնում են նրանց բացվածքների զգալի մասը։ Անիմաստ է մտածել, որ տաճարի սկզբնական կառուցողը կարող էր հնարավոր համարել, որ այդ արսիդներում կատարվող ծիսակատարությունների ժամանակ ունկնդիրները տեղավորվեին ստիլորատի աստիճանների տարբեր բարձրությունների վրա։

Ամենայն հավանականությամբ այդ արսիդները կառուցվել են տաճարի սկզբնական ստիլորատի կառուցումից հետո, արտաքին սյունասրահների ու նրանց սալահատակի հավելման ժամանակ (կամ դուցե նրանցից հետո)[1]։

ե) Արևելյան կողմի սենյակների մասին դժվար է որոշակի բան ասել։ Արևելյան սենյակները, եթե լինեին հետագա հավելվածքներ, ապա Երերուքի սկզբնական տեսքը կնմանվեր Քասագի, Տեկորի սկզբնական կառուցվածքներին. եթե կառուցված լինեին բազիլիկայի սկզբնական կառուցվածքի հետ, ապա հուշարձանի սկզբնական տեսքը կմոտենար Տեկորի, Դվինի կազմավորման երկրորդ շրջանին։ Իսկ եթե արևելյան կողմում հավելվածք լինեն միայն այդ երկարավուն սենյակների շարունակությունները, ապա Երերուքի սկզբնական տեսքը կմոտենա Աշտարակի և Ծիծեռնավանքի կառուցվածքներին։

Այսպիսով, Երերուքի բազիլիկայում հետագա հավելվածքներ են՝

ա) Արևմտյան կողմի նախասրահը և ամենայն հավանականությամբ կողքի սենյակները։

բ) Հարավային և հյուսիսային ճակատներին կից արտաքին սյունազարդ սրահները։

գ) Տաճարի ամբողջ պարագծով կառուցված այժմյան բազմաստիճան ստիլորատը։

Նշանակում է, եթե Երերուքի այժմյան տեսքից հեռացնենք հետագայում ավելացված մասերը, ապա դժվար չէ նկատել, որ Երերուքը նույնպես սկզբում իրենից ներկայացրել է բազիլիկային մի առավել պարզ կառուցվածք։ Հետևապես թե Տեկորի, թե Քասագի, և թե Երերուքի այժմյան կառուցվածքները ըստ էության հետևանք են միևնույն կարգի էվոլյուցիայի։

4. ԴՎԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵՆ

Վերջին տարիների պեղումները լիովին հաստատեցին, որ Դվինի Կաթուղիկեն սկզբում հանդիսանալով բազիլիկային առավել պարզ կառուցվածք, գտնվել է նույն այն էվոլյուցիոն զարգացման ընթացքի մեջ, ինչ Քասագը ու համանման կառուցվածքները[2]։

Դվինի Կաթուղիկեն ըստ մատենագրության կառուցված է Նախկին զբաղաշտական մեհյանի տեղում Վահան Մամիկոնյանի կողմից, որը «...'ի տեղի Բագնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ հայրապետութեանն և հաստատեալ կացուցանէ 'ի նմա զմեծ Հայրապետն Գիւտ»[3]։

Նշանակում է Դվինի Կաթուղիկեի կառուցումը կապվում է Գյուտի կաթողիկոսության և կաթողիկոսությունը Դվին տեղափոխելու հետ։ Եթե եկեղեցու ավարտումից հետո Գյուտ կաթողիկոսը (461—478) հաստատվում է Դվինում, ապա Կաթուղիկեի շինարարու-

---

ծիսակատարման համար կամ կառուցվել «պատարագի նկատառումով» (Heinrich Glück, նույն տեղում, 378)։

1 Ճիշտ նման հաջորդականություն նկատվում է նաև Տեկորում (Թ. Թորամանյան, «Նյութեր...», հատոր 1-ին, 197)։

2 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, «Դվին քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952, 88—101։ Հայաստանի բազիլիկ կառուցվածքների կազմավորման ու նրանց հետագա զարգացման ընթացքը շոշափող մեր տվյալ աշխատությունը իրրև «Քասագի բազիլիկան» դիսերտացիոն աշխատության մի հատված, 1951 թ. ներկայացված էր պաշտպանության (տե՛ս ավտոռեֆերատ), երբ լույս տեսավ ընկ. Ղաֆադարյանի «Դվինի Կաթուղիկե եկեղեցին» արժեքավոր աշխատությունը («Տեղեկագիր» հայկ. ՍՍՌ Գիտ. ակ., № 9, 1951, 71, 83), որը հետագայում տեղ է գտել հեղինակի վերոհիշյալ աշխատության մեջ։ Մինչ այդ աշխատությունների հրապարակումը ընկ. Ղաֆադարյանը սիրով ծանոթացրել էր մեզ Կաթուղիկեի պեղումների նյութերին, որի համար հայտնում ենք շնորհակալություն։

3 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, 59։

թյունը պետք է ամենաուշը ավարտված լիներ այն ժամանակ, երբ կաթողիկոսարանը Վաղարշապատից տեղափոխվեց Դվին, այսինքն 470—71 թվականներին[1]։

Կաթուղիկեն (ինչպես Ղազար Փարպեցու մի վկայության հիման վրա, դեռ մինչ պեղումները իրավացիորեն կռահում էր Թորամանյանը) շրջապատված է եղել արտաքին սրահներով[2]։

Ղազար Փարպեցին նկարագրելով Վահան Սամիկոնյանի մարզպան նշանակվելու առթիվ 485 թ. Դվինի կաթուղիկեում տեղի ունեցած հանդեսը, նշում է, թե այնքան մեծ բազմություն էր եկել, որ ժողովուրդը չտեղավորվելով եկեղեցու ներսում, հավաքվել էր եկեղեցու արտաքին սրահներում, փողոցներում և հրապարակներում. «եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»[3]։

Վերջին պեղումների ժամանակ բացված արտաքին սրահների հետքերը հաստատեցին պատմիչի վկայությունը։

Նշանակում է Դվինի արտաքին սրահների գոյության մասին տեղեկությունները դալիս են դեռ 485 թվականից. բացառված չէ, որ նրանք կառուցված լինեին մինչև 485 թվականը։ Կաթուղիկեի սկզբնական բազիլիկային կառուցվածքը, ըստ երևույթին հասնում է մինչև 6-րդ դարի վերջին քառորդը, և ապա 572 թ. հույն-պարսկական պատերազմի ժամանակ ավերվելով[4], ենթարկվում է խոշոր վերակառուցման՝ մարզպան Սմբատ Բագրատունու և կաթողիկոս Աբրահամ Ռշտունու (608—615) կողմից և վերջնականապես ավարտվում Կոմիտաս կաթողիկոսի օրոք (615—628)[5]։

Հիշատակվում է, որ այդ վերակառուցումը կատարվում է «...Կոփածո քարամբք դեղեցկագիր շինուածիւ կրով ձուլեալ 'ի մի...»[6]։

Պեղումները հաստատելով մատենագրական տեղեկությունների ճշտությունը ցույց տվին, որ Դվինի կաթուղիկեին տարբեր ժամանակներում ավելացված են՝

ա) արտաքին սրահները,

բ) մինչ վերջին պեղումները հայտնի արևելյան արսիդը,

գ) դմբեթը,

դ) հյուսիսային և հարավային ճակատներից դուրս ելնող արսիդները[7]։

Արտաքին սրահների հավելման ժամանակը ընդունելով մինչև 485 թվականը, արևելյան (մինչ վերջին պեղումները հայտնի) արսիդի և դմբեթի կառուցումը պետք է վերագրել 608—628 թթ. ժամանակաշրջանի վերակառուցմանը, իսկ հյուսիսային և հարավային արսիդների ավելացումը եթե ոչ նույն ժամանակաշրջանում[8], ապա անշուշտ դարձյալ 7-րդ դարում[9]։

---

[1] Ճարա. Թեկնածու Վ. Հարությունյանը գրում է, «Մեր պատմագիրների տվյալների համեմատ մինչև 572 թվականը գոյություն է ունեցել ս. Գրիգորի մի այլ եկեղեցական շենք, որը կառուցված է եղել 470-ական թվականներին կրակապաշտների ատրուշանի վայրում՝ աղյուսից և փայտից», Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, 49։

[2] Թ. Թորամանյան, «Նյութեր...», հատ. 2-րդ, 132։ Նույնը ենթադրվել է Ա. Ս. Շահնազարյանի (Двин, 1940, 39) և Վ. Հարությունյանի կողմից—Архитектурн. памятн. Двина, изд. АН Арм. ССР, 1947, № 8, 87).

[3] Ղ. Փարպեցւոյ, Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, 394։

[4] Թ. Թորամանյան, «Նյութեր...», հատ. I, 245։

[5] Սեբէոսի եպ. պատմութիւն, ս. Պետերբուրգ, 1879, գլ. ԺԷ, 64։

[6] Հովհ. Դրասխանակերտցի, նույն տեղում, 71. նույն վկայությունը հիշատակվում է նաև Սեբէոսի մոտ (գլ. ԺԷ, 64)։

[7] Տես Կ. Ղաֆադարյան, «Դվին քաղաքը և նրա պեղումները», էջ 91, նկ. 62։

[8] Նույն շրջանում կառուցված դմբեթակիր բազիլիկները դերծ են նման արսիդներից (Դայանե, 630 թ.)։

[9] Վ. Հարությունյանը եռարսիդ կառույցածքը համարում է 7-րդ դարի սկզբի գործ (նույն տեղում, 55). նույն տեսակետն է հայտնում նաև ընկ. Կ. Ղաֆադարյանը «Դվին քաղաքը և նրա պեղումները», 99—100։

Այսպիսով, եթե Դվինի կաթուղիկեից հեռացնենք նրա մինչ 485 թվականը և նրանից հետո հավելվածքները, ապա ստացվում է, որ Դվինը մինչ 485 թվականը իրենից ներկայացրել է բազիլիկային մի առավել պարզ կառուցվածք և ըստ էության գտնվել է նույն զարգացման ընթացքի մեջ, ինչ Քասաղը, Տեկորը և Երերուքը։

5. ԵՂՎԱՐԴԻ ԵՌԱՆԱՎ ԲԱԶԻԼԻԿԱՆ

Այս հուշարձանն իրենից ներկայացնում է մի պարզ կառուցվածք առանց արտաքին հավելվածքների (նկ. 8)։

Զորս զույգ Т-անման մասսիվ մույթերը ցույց են տալիս, որ դեպի գլխավոր նավը ելնող որմնասյուներից սկզբնավորվել են թաղակիր կամարներ, իսկ նրանց վրայից ընթացել է թաղակապ ծածկը.

Հուշարձանի ներքին հորինվածքում, նույն ժամանակաշրջանի համանման կառուցվածքների համեմատությամբ նկատվում է հետևյալ ուշագրավ պատկերը.

1) Ընդերկայնական պատերի որմնասյուները, աստիճանաբար այնպես են հեռանում գլխավոր նավի մույթերի առանցքի ուղղություններից, որ արդեն արևմտյան մասում, որմնասյուների վրա հանգչող կամարների մյուս կրունկները դուրս են ընկնում մույթերի ուղղաձիգ հարթություններից։

Մինչդեռ նույն ժամանակաշրջանի համանման կառուցվածքներում (Քասաղ, Երերուք, Տեկոր), ընդերկայնական պատերի որմնամույթերը օրդանապես կապված են գլխավոր նավի համապատասխան մույթերին։

2) Ընդերկայնական պատերի որմնասյուները գլխավոր նավի մույթերից ելնող որմնասյուների համեմատությամբ ունեն զգալիորեն փոքր չափեր։ Այնինչ նույն ժամանակաշրջանի համանման կառուցվածքներում (Քասաղ, Տեկոր, Երերուք, Բոլնիսի) նրանք միմյանց հավասար են։

3) Եթե Եղվարդի մույթերից դեպի մեծ նավը ելնող որմնասյուների լայնությունները (0,72—0,76 մետր) դրեթե հավասար են նույնանման կառուցվածքների համապատասխան որմնասյուներին (Քասաղ 0,76—0,80 մ, Տեկոր 0,70 մ, Երերուք 0,68—0,70 մ, Աշտարակ, 0,68—0,70 մ), ապա, Եղվարդի ընդերկայնական պատերի որմնասյուների լայնությունները (0,54—0,59 մ) —զգալիորեն փոքր են նույն հուշարձանների համապատասխան որմնասյուների լայնություններից (Քասաղ 0,80 մ, Տեկոր 0,70 մ, Երերուք 0,60—0,70 մ, Բոլնիսի 0,70—0,71 մ)։

4) Եղվարդում գլխավոր նավի արևմտյան մույթերը անհարմար ձևով կառուցված են դռների բացվածքների դիմաց։ Մինչդեռ նույն ժամանակաշրջանի համանման կառուցվածքներում նման երևույթ չկա (Քասաղ, Տեկոր, Երերուք, Բոլնիսի, ինչպես և զմրեթավոր բազիլիկներում՝ Օձուն, Գայանե, Մրեն և այլն)։

Մեր կարծիքով այս բոլորից հետևում է, որ Եղվարդի գլխավոր նավի թաղակապ կառուցվածքը հանդիսանում է տեղում գոյություն ունեցած ավելի հնագույն շենքի նկատմամբ հետագա հավելվածք։

Այս հուշարձանի կառուցումն ըստ նրա հարավային ճակատում գտնվող արձանագրության վերագրվում է Եղվարդցի Մովսես կաթողիկոսին (574—603)[1]։

Եթե Մովսես կաթողիկոսը լիներ շենքի սկզբնական կառուցողը, ապա սկզբնական կառուցվածքը կարող էր հանդես գալ ամենաշուտը 6-րդ դարի վերջին քառորդից սկսած մինչև 6-րդ դարի վերջին տասնամյակները։ Այն ժամանակ կստացվեր, որ քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքներին հատուկ, Եղվարդի այժմյան եռանավ թաղակապ կառուցվածքը ստեղծվել է է՛լ ավելի ուշ՝ առնվազն 6-րդ դարի վերջերին կամ 7-րդ դարի սկզբներին։

Մեզ թվում է, որ հազիվ թե տվյալ ժամանակաշրջանում նման անազարտ ձևով կրկնվեր բազիլիկային կառուցվածքների սկզբնական այդ կերպարը, երբ 6-րդ դարի վերջերի և 7-րդ դարի սկզբների բոլոր նորակառույցներում արդեն հանդես է գալիս զմբեթը (Ավան, Հռիփսիմե, Գայանե և այլն)։

Նշանակում է շենքի թաղակապ կոմպոզիցիայով կառուցվածքը Մովսեսին վերագրելու դեպքում, ստում է ենթադրել, որ այդ թաղակապ հորինվածքը կարող էր հանդես

[1] J. Strzygowski, Die Baukunst..., B. I. 145. Թ. Թորամանյան, «Նյութեր...», հատ. I, 118, 125, 131, 245։



Նկ. 8. Եղվարդի բազիլիկայի հատակագիծը։
Չափագր. Ա. Սահինյանի

դալ ամենաուշը 6-րդ դարի 2-րդ կեսերին, այսինքն Մովսեսի կաթողիկոսության վաղ շրջանում[1], իսկ սկզբնականը առավել հնագույն ժամանակներում։

Շենքի վերակառուցման հավանականության և նրա առավել վաղ շրջանում կառուցվելու օգտին են վկայում նաև հետևյալ փաստերը։

ա) Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնատիպ հուշարձաններից Աշտարակի բազիլիկայի 5—6-րդ դարերի կառուցվածք համարվող այժմյան թաղակապ կոմպոզիցիան նույնպես ամբողջությամբ հանդիսանում է նման վերակառուցման հետևանք[2]։

բ) Հովհաննավանքի 4-րդ դարում կառուցված միանավ բազիլիկայի փայտյա ծածկը 6-րդ դարում վերափոխվել է թաղի[3]։

Ուշադրավ է, որ Հովհաննավանքի վերակառուցումը տեղի է ունեցել նույն Մովսեսի օրոք[4]։

Նշանակում է, եթե փայտյա տանիքները 5—6-րդ դարերում փոխարինվում էին թաղակապ տանիքների և նույնիսկ Մովսես կաթողիկոսի ժամանակ փայտյա ծածկը փոխարինվում է «քարամբ պատուականօր»[5], ապա կարող է միանգամայն հասկանալի լինել նաև Եղվարդի վերակառուցումը։

գ) Եղվարդի արձանագրությունը, ինչպես իրավացիորեն նշում է Թորամանյանը «...ոչ մանրամասն ստույգ կարդացող չէ եղած»[6]։ Ավելին, էպիգրաֆիկայի մասնագետները գտնվելով տեղում, հիշատակում են, որ «այդ արձանագրության մեջ չկարողացանք գտնել և Մովսես անունը, որ նույնացրել է Ստրժիգովսկին կամ նորան այդպես յայտնող աղբիւրը Եղվարդեցու հետ կապելով եւ եկեղեցո շինութիւնը»[7]։

Նույն կարծիքը հայտնեց մեզ նաև ընկ. Կ. Ղաֆադարյանը։ Նշանակում է, արձանագրությունը եղվարդեցի Մովսես կաթողիկոսի անվան հետ կապելը և դրա հիման վրա շենքի կառուցումը նրան վերագրելը ստույգ չէ։

Այսպիսով, ինչպես շենքի կառուցողական վերլուծության, այնպես էլ վերոհիշյալ փաստերից կարելի է հետևեցնել.

ա) Եղվարդի եռանավ բազիլիկայի թաղակապ հորինվածքը հանդիսանում է հետագա հավելվածք։

բ) Բազիլիկան սկզբում ունենալով ներքին առավել հնագույն կառուցվածք հանդես է եկել շատ ավելի վաղ, քան մինչև այժմ ենթադրվող 6—7-րդ դարերը[8]։

---

1 Իհարկե, կրկնում ենք այս այն դեպքում, եթե ընդունենք որ Մովսեսը իրոք որ կապ ունի բազիլիկայի այժմյան կառուցվածքի հետ, որովհետև ոչ միայն դժվար է հաստատել շինարարական արձանագրությունը Մովսեսին վերագրելը (այս մասին կխոսվի ստորև) այլև և շենքի նույնիսկ թաղակապ կառուցվածքը իր արխաիկ բնույթով և համաչափություններով սերտ կերպով առնչվում է քրիստ. վաղ շրջանի առավել հնագույն հուշարձանների հետ (Քասաղ)։ Թերևս այդ է պատճառը, որ Թորամանյանը այն երբեմն համարում է նաև 5-րդ դարի գործ («Նյութեր...» հատ. 1-ին, 87), իսկ Ն. Տոկարսկին 5-ից 6-րդ դդ. գործ (տես „Архитектура древней Армении", 57).

2 Աշտարակի մասին հանգամանորեն կխոսվի ստորև։

3 Ջ ա ք ա ր ե ա յ. Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, Հ. Դ. 5—6։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

6 Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, «Նյութեր...», հատ. II, 127։

7 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ. Աղիրէկենք եւ նրանց շինարարական գործը, բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, 1921—1922, 181։

8 Այժմ ամբողջապես ոչնչացված գլխավոր աբսիդի արտաքին կողմում գոյություն է ունեցել 13-րդ դարի մի արձանագրություն, ուր հիշատակվել են ինչ որ Գրիգոր, որն իր և Հովիի (?) հոգու փրկության համար կառուցել է սեղան (J. Strzygowski, Die Baukunst..., B. I. 145)։ Հնարավոր է, որ խոսքը վերաբերում է աղութասրահի փոքր նավերի դիմաց գտնվող երկրորդական աբսիդներին, որովհետև նման աբսիդների կառուցման սովորությունը Հայաստանում հանդես գալով դեռ 7-րդ դարում հանդիպում է ընդհուպ մինչև 13—14-րդ դարերը (օր. Անիի Նախշլիում և այլուր)։

6. ԱՇՏԱՐԱԿԻ ԲԱԶԻԼԻԿԱՆ

Աշտարակի բազիլիկան երեք գույց Т-անման մույթերի միջոցով բաժանված է մեկ լայն և երկու նեղ նավերի (Նկ. 9)։

Արսիդն ունի պայտաձև հատակագիծ, որն իր երկու կողմի սենյակներով արտաքինից առնվելով մեկ ընդհանուր պատի մեջ, ազոթասրահի հետ կազմում է օրգանական միասնություն։

Հուշարձանի արևմտյան և հյուսիսային ճակատները դրսից ծածկված են ուշ շրջանի երկրորդ պատերով, իսկ հարավային ճակատը հիմնովին վերակառուցված է։ Այդ վերակառուցումների հետևանքով անհնարին է պարզել տաճարին կից այլ կառուցվածքների (սյունասրահներ, շքամուտքեր) գոյության հարցը։

Տաճարը, ի դեմս նրա կառուցողական արվեստի հնագույն բնույթի (Т-անման արխաիկ մույթեր, խիստ շեշտված պայտաձև կամարներ և այլն) Թորամանյանը համարում է ամենաուշը 5-րդ դարի գործ[1], իսկ Ստրժիգովսկին կապում է աշտարակեցի կաթողիկոս՝ Ներսես 2-րդի (546—557) ժամանակաշրջանի հետ[2]։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ տաճարի այդ 5—6-րդ դդ. գործ համարվող ներքին կառուցվածքը հանդիսանում է հետագա հավելվածք։

ա) Տաճարի ներսում հյուսիսային պատի վրա պահպանված են երկու հնագույն որմնասյուներ, որոնք գլխավոր նավի մույթերի նկատմամբ ունեն միանգամայն պատահական դասավորություն (Նկ. 9)։

Ակնհայտ է, որ այդ որմնասյուները գոյություն են ունեցել մինչև գլխավոր նավի կամարաշարքերի ու նրանց վրայից սկսվող թաղակապ ծածկի կառուցումը։ Պահպանված է արևմտյան որմնասյան խարիսխը, որն իր մշակումով խիստ տարբերվում է եռանավ մասի բոլոր մույթերի և որմնասյուների խարիսխներից (Նկ. 10)։

Այդ խարիսխը նման է Քասաղի, Երերուքի սկզբնական կառուցվածքների խարիսխներին, իսկ եռանավ մասի խարիսխները նման են Քասաղի, Տեկորի տաճարներին հետագայում ավելացված մասերի, ինչպես և 5-րդ դարում կառուցված վրացական Բոլնիսի Սիոնի եռանավ մասի խարիսխներին[3]։ Հետևապես որոշակի ընդհանրություն է նկատվում մի կողմից Քասաղի, Աշտարակի, Տեկորի, Երերուքի սկզբնական կառուցվածքների մանրամասների մշակման միջև և մյուս կողմից՝ այդ հուշարձաններին հետագայում ավելացված մանրամասների ու 5-րդ դարի կառուցվածքների մանրամասների մշակումների միջև։ Գլխավոր նավից պահպանված հարավային կամարաշարքի արևմտյան ծայրի կամարը և նրա վրայի թաղը, առանց շինարարական կապի կպցրած են տաճարի պատին։ Նման պատկեր գոյություն է ունեցել նաև հյուսիսային կամարաշարքի ու տաճարի պատերի միացման մյուս հանգույցներում։ Պարզ երևում է, որ թաղակապ կառուցվածքը տաճարի պատերի նկատմամբ հանդիսանում է հետագա հավելվածք։

Նշանակում է, թե՛ հյուսիսային պատի վրա պահպանված հնագույն որմնասյուները և թե՛ գլխավոր նավի կամարների ու թաղակապ ծածկի առանց շինարարական կապի տաճարի պատերին միացնելը ցույց են տալիս, որ այժմյան եռանավ մասը ժամանակակից չէ տաճարի սկզբնական կառուցվածքին։

Թե ինչպիսի կառուցվածք կարող էր եղած լինել մինչև թաղակապի կառուցումը, ստույգ դժվար է ասել։

Հյուսիսային պատի հիշյալ որմնասյուների շրջապատում կատարած հետազոտության ժամանակ, որևէ այլ մույթերի կամ հիմքերի հետքեր չգտանք։ Ամենայն հավանականությամբ տաճարի ներքին սկզբնական կառուցվածքը եղել է փայտաշեն, որն ամրողջությամբ վերացվել է այժմյան թաղակապ կառուցվածքի ավելացման ժամանակ։

Այսպիսով, կարելի է նշել, որ Աշտարակում նույնպես տեղի է ունեցել արմատական վերակառուցում և նրա սկզբնական կառուցվածքը հանդես գալով ավելի վաղ, քան այժմյան 5—6-րդ դարերի գործ համարվող ներքին կառուցվածքը, ըստ իր ընդհանուր կոմպոզիցիայի հանդիսանում է Հայաստանի բազիլիկային կառուցվածքների էվոլյուցիոն զարգացման փուլերն անցած հուշարձաններից մեկը։

---

[1] Թ. Թորամանյան, «Նյութեր...», հ. I, 244—289 և այլն։

[2] J. Strzygowski, Die Baukunst..., B. I. 146

[3] Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 15, նկ. 6, էջ 17, նկ. 7, էջ 21, նկ. 9, էջ 35, նկ. 15։



Նկ. 9. Աշտարակի բազիլիկայի հատակագիծը։
Չափագր. Ալ. Սահինյանի

Հետաքրքրական է, որ բազիլիկայի կառուցվածքների կազմավորման ընթացքի մեջ է գտնվել նաև Օձունի գմբեթավոր բազիլիկան։



Նկ. 10. Աշտարակի բազիլիկայի ընդլայնական կտրվածքը։
Չափագր. Ալ. Սահինյանի

7. ՕՁՈՒՆԻ ԳՄԲԵԹԱՎՈՐ ԲԱԶԻԼԻԿԱՆ

Թորամանյանը Օձունը հիմնականում դասելով Քասաղի, Տեկորի, Երերուքի կառուցվածքների շարքին[1], գրում է. «Օձուցի (Ուզունլարի) եկեղեցին, անպայման 5-րդ դարի եկեղեցի է, արտաքին portique-ով, պայտաձև աղեղներով, բոլորովին նախնական Մեսրոպյան տաճերով տեղ տեղ արձանագրությանց մնացորդներով»[2] (ընդգծումն իմն է—Ա. Ս.)։

Ըստ ընդհանուր կոմպոզիցիայի Օձունը գմբեթավոր բազիլիկա է. նրա հարավային արևմտյան և հյուսիսային ճակատները Տեկորի, Երերուքի, Դվինի նման շրջապատված արտաքին սրահներով (նկ. նկ. 11, 12)։

Աբսիդն ունի պայտաձև հատակագիծ, որի երկու կողմի սենյակներն աբսիդի մեկտեղ առնված են մեկ ընդհանուր պատի մեջ։

Արտաքին սրահները հյուսիսային և հարավային ճակատներում իրենցից ներկայանում են մասսիվ մույթերի վրա կառուցված պայտաձև աղեղներով կամարաշարքեր, արևմտյան ճակատում արտաքինից ընդհանուր պատ է կամարի մի խոշոր բացվածք։

Հյուսիսային ճակատի վրա պահպանված նախկին սրահի հետքերը, ինչպես և հարավային և արևմտյան ճակատներին կից սրահների ներկայիս կիսավեր դրությունները, պարզ ցույց են տալիս, որ արտաքին սրահները առանց շինարարական կապի դակի հպված են տաճարի աղոթասրահի պատերին (նկ. 11)։

Համանման պատկեր դրություն ունի շքամուտքերի գույդ որմնասյուների

1 Թ. Թորամանյան, «Նյութեր...», հ. 1-ին, 202—203։
2 Նույն տեղում, 244—245։



Նկ. 11. Օձունի գմբեթավոր բազիլիկայի արևմտյան ճակատից մի մասը



Նկ. 12. Օձունի դմբեթավոր բազիլիկայի հատակագիծը։
Չափագր. Թ. Թորամանյանի

պատասխան հանդուցյններում, ուր աղոթասրահին կից շքամուտքերի որմնասյունները կիսով չափ մնացել են արտաքին սրահի մույթերի կառուցվածքի տակ։

Ակնհայտ է, որ թե արևմտյան, թե հյուսիսային և թե հարավային ճակատների որահները Քասաղի, Տեկորի, Սրերուրի, Դվինի արտաքին սրահների նման ամրողջությամբ հանդիսանում են հետագա հավելումներ[1]։

Նշանակում է, Օձունի դմբեթավոր բազիլիկայի այժմյան կառուցվածքը նույնպես սկզբում ունեցել է առավել պարզ տեսք[2]։

Սակայն Օձունի օժանդակ սենյակների և շքամուտքերի օրգանական միասնությունը աղոթասրահի հետ ինչպես և առանձին մանրամասների մշակումները (դռների երիզների, լուսամուտների պսակների և այլն), ցույց են տալիս, որ Օձունը հանդիսանալով բազիլիկային կառուցվածքների էվոլյուցիոն զարգացման ընթացքի մեջ գտնվող հուշարձաններից մեկը, պետք է որ հանդես եկած լինի Քասաղի, Տեկորի, Դվինի, ինչպես և Սրերուրի նախնական կառուցվածքներից հետո։

Այսպիսով, քրիստոնեական վաղ շրջանի Հայաստանի բազիլիկային կառուցվածքների ուսումնասիրության նյութերը ակնառու ցույց են տալիս այդ կառուցվածքների նախնական պարզ տիպից ավելի բարդի անցման՝ կազմավորման ու նրանց հետագա զարգացման ընթացքը։

Այդ պատկերը առավել ակնառու դարձնելու նպատակով ներկայացնում ենք «Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքների կազմավորումն ու նրանց հետագա զարգացման ընթացքը» ուրվագծող հատուկ սխեմա (նկ. 13)։

Սխեմայում ցույց տրված քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքների և ավելի ուշ հանդես եկած որոշ հուշարձանների նյութերի համեմատությունից հետևում է.

1. Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային շենքերի մի մասը սկզբում բաղկացած է եղել միայն աղոթասրահից և արսիդի առավել հնագույն (հավանաբար ուղղանկյուն) կառուցվածքից[3]։ Այդ հուշարձանները որպես առաջին հավելված ստացել են այժմյան՝ արտաքուստ բազմանիստ, ներքուստ պայտաձև արսիդները (Քասաղ, Տեկոր)։

2. Հայաստանի բազիլիկային կառուցվածքների ձևափոխությունների մյուս աստիճանը հանդիսանում է օժանդակ սենյակների կառուցումը[4]։

Հուշարձաններից մի մասը մնացել է առանց նման սենյակների (Եղվարդ)[5]. մի մասի սկզբնական կառուցվածքներում ավելացված են մեկ կամ երկու սենյակներ (Քասաղ, Տեկոր, Դվին)[6]։ Մի մասում այդ սենյակները հանդես են գալիս հուշարձանի սկզբնական կառուցվածքի հետ, սակայն դեռ շենքի ընդհանուր կոմպոզիցիայի հետ օրգանապես չեն կապվում (Սրերուր), իսկ մի մասում, նրանք հանդես են գալիս արդեն ընդհանուր շենքի հետ որպես միասնական ամրողջություն (Աշտարակ, Միծենոնավանք)[7]։

3. Որոշ հուշարձաններ սկզբում չունենալով շքամուտքեր, դրանք ստանում են հետագայում (Քասաղ, Տեկոր), մի մասը մնացել է առանց շքամուտքերի (Միծենոնավանք)։

---

1 Աղոթասրահի հյուսիսային, հարավային և արևմտյան պատերի վրա պահպանված են միմյանցից հաստատուն հեռավորության վրա գտնվող քարե մասսիվ պահունակներ, որոնք ծածկված են եղել սյունասրահի այժմյան թաղակապ ծածկի տակ։ Թերևս այդ պահունակները հանդիսացել են արտաքին սրահների այժմյան թաղակապ ծածկից առաջ գոյություն ունեցած ինչ որ առավել հնագույն (մի գուցե փայտյա) ծածկի մնացորդներ։

2 Ինչ վերաբերում է Օձունի դմբեթին, ապա առայժմ դժվարանում ենք ասել, արդյոք նա Տեկորի, Դվինի նման ավելացված է հետագայում, թե կառուցված է սկզբնական կառուցվածքի հետ։ Մի բան թերևս հնարավոր է ավելի որոշակի նշել, որ համանման կառուցվածքների համեմատությամբ, անշուշտ, նա ստեղծվել է Տեկորի դմբեթից ուշ և ամենայն հավանականությամբ Բայանեից շուտ։

3 Այդ հետևությանը Թորամանյանը հանգել էր դեռ Տեկորի տաճարի ուսումնասիրությունից, «Նյութեր...», հատ. 1-ին, 131։

4 Թ. Թորամանյան, «Նյութեր...», հ. 1-ին, 120—121։

5 Միանավներից՝ Շիրվանջուղ, Մաղարջուղ և այլն։

6 Միանավներից՝ Դիրաքլար, Թանահատ և այլն։

7 Օժանդակ սենյակները Սրերուրում և Տեկորում երկհարկանի են, իսկ Քասաղում՝ սկզբում եղել են մեկ հարկանի, հետո դարձվել են երկհարկանի։



Նկ. 13. Հայաստանի բազիլիկային կառուցվածքների կազմավորումն ու նրանց հետագա զարգացման ընթացքը ուրվագծող սխեմա։

իսկ մի մասում շքամուտքերը հանդես են գալիս արդեն հուշարձանների սկզբնական կառուցվածքների հետ (Երերուք, Եղվարդ (?))։

4. Հուշարձանների մի մասում, ներքին կոմպոզիցիան հենց սկզբից հանդիսացել է քարե մասսիվ մույթերով թաղակապ (Քասաղ, Տեկոր, Երերուք), իսկ մի մասում հավանաբար փայտածածկ (Աշտարակ, Եղվարդ, Միծեռնավանք (?)), որոնք հետագայում փոխարկվում են քարաշենի)[1]։

5. Հայաստանի բազիլիկային կառուցվածքների ձևափոխությունների հաջորդ աստիճանը հանդիսանում է արտաքին սրահների կառուցման շրջանը։

Քրիստոնեական վաղ շրջանի Հայաստանի եռանավ բոլոր կառուցվածքները սկզբում արտաքին սրահներ չեն ունեցել։ Հուշարձանների մեծագույն մասը այն ստացել է հետագայում (Քասաղ, Տեկոր, Դվին, Երերուք)[2] իսկ մի մասը դեռ չի ունեցել նման հավելվածներից (Միծեռնավանք, Եղվարդ[3])։

Քրիստոնեական վաղ շրջանի դրեթե բոլոր նշանակալի կառուցվածքներին կից հանդես եկող այդ ուշագրավ հավելվածների կառուցման ժամանակաշրջանը հայտնի չէ։

Փարպեցու վկայությունից մենք իմանում ենք 485 թ. այդ սրահների Հայաստանում գոյություն ունենալու փաստի մասին և ոչ նրանց կառուցման ժամանակաշրջանի։ Հետևապես, 5-րդ դարի երկրորդ կեսը կարող է համարվել արտաքին սրահների Հայաստանում հանդես գալու միայն ամենաուշ սահմանը, իսկ նրանից առաջ թե որքան շուտ սկսվեց դրանց կառուցումները, առայժմ, ստույգ դժվար է ասել։ Որոշ ժամանակաշրջանից հետո այս սրահների կառուցման անհրաժեշտությունը, ինչպես իրավացիորեն նշել է Թորամանյանը, ըստ երևույթին վերանում է, 6-րդ դարի վերջերի և 7-րդ դարի սկզբների նորակառույց հուշարձաններում (Ավան, 590—611, Հռիփսիմե, 618 թ., Դայանե, 630 թ.) այդ սրահներն այլևս հանդես չեն գալիս։

Նշանակում է, Հայաստանում արտաքին սրահների հանդես գալու ամենաուշ սահմանը լինելով 5-րդ դարի երկրորդ կեսը, նրանց կառուցման անհրաժեշտության վերացման ժամանակաշրջանը հավանաբար հանդիսացել է 6-րդ դարի վերջին քառորդը[4]։

Եթե Հայաստանում արտաքին սրահների կառուցման ամենաուշ սահմանը 485 թ. է, ապա այն շենքերում, ուր դրանք հանդիսանում են հետագա հավելված (Քասաղ, Տեկոր, Դվին, Երերուք)[5], շենքերի սկզբնական կառուցվածքները թերևս ստեղծված լինեն ավելի առաջ։ Որովհետև 480-ական թվականներին ու նրանից հետո հանդես եկող կառուցվածքներում, արտաքին սրահները, որպես ֆունկցիոնալ անհրաժեշտություն հանդես կդային արդեն շենքերի ընդհանուր կառուցվածքների հետ մեկտեղ, ինչպես Բոլնիսի Սիոնում 478/9—493/4 թթ.։

Իսկ եթե ի նկատի առնվի որոշ շենքերի (Քասաղ, Տեկոր, Դվին) արտաքին սրահներից էլ ավելի առաջ կատարված մյուս հավելումները (ժամանակ սենյակներ, այժմյան՝ արտաքուստ բազմանիստ, ներքուստ կորագիծ աբսիդներ և այլն), ապա այդ շենքերի

---

[1] Երերուքի թաղակապ լինելը հաստատում են նաև Թորամանյանը «Նյութեր...», հ. I, 203 և Սարգիզովսկին (Die Baukunst... B. I. 158)։ Միանավերից, թաղակապ են եղել Գառնին, Շիրվանջուղը, Զառջահիսը և այլն։ Թաղը հայկական լեռնաշխարհում հայտնի լինելով դեռ ուրարտական ժամանակներից (Б. Б. Пиотровский, История и культура Урарту, 258—270) հավանաբար գոյություն է ունեցել այն Հայաստանում նաև քրիստոնեական մուտքին նախորդ ժամանակներում (Բուզանդ, Հայոց պատմություն, չորրորդ գիրք, գլ. իգ, 197) և կիրառվել քրիստոնեության հաստատման հենց սկզբնական շրջանում (Աղց, 4-րդ դ.)։ Ն. Տոկարսկին գրում է, թե բացառված չէ, որ վաղ շրջանում փայտածածկի հետ եկեղեցական կառուցվածքներում կիրառված լինի նաև թաղը (Н. Токарский, Арх. древн. Армении, 52—53)։

[2] Միանավերից՝ Թանահատ, Օձուն։

[3] Միանավերից՝ Շիրվանջուղ, Զովունի և այլն։

[4] Բազիլիկային կառուցվածքներին կից համանման սրահներ նույն ժամանակաշրջանում հանդես են եկել նաև Հայաստանի հարևան այլ երկրներում (Վրաստան, Բոլնիսի Սիոնում) 478/9—493/4, Ցքարոսթավիի բազիլիկայում (5-րդ դարի վերջ 6-րդ դարի սկիզբ, Ш. Я. Амиранашвили, История грузинского искусства, Москва, 1950, 106—107)։ Սիրիա՝ Ռուվեայում (5—6-րդ դդ.), Տուրմանինում (5—6-րդ դդ.) և այլն։

[5] Միանավերից՝ Դիրաբլար, Թանահատ, Օձունի փոքր եկեղեցին և այլն։

սկզբնական կառուցվածքները պետք է ստեղծված լինեն շատ ավելի վաղ, քան 480-ական թվականների ու հավանաբար Օրանից էլ ավելի առաջ տեղի ունեցած հավելումները:

Հետևապես, քրիստոնեական վաղ շրջանի Հայաստանի եռանավ կառուցվածքների զրեթե բոլոր հուշարձանները ըստ երևույթին հանդես գալով մինչև 5-րդ դարի կեսերը, նրանց մի մասը գալիս է առավել հնագույն ժամանակներից:

6. Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային կառուցվածքների ձևափոխությունների հաջորդ հիմնական աստիճանը հանդիսանում է նրանց զմբեթավորման շրջանը:

Հուշարձանների մի մասը մնում է առանց զմբեթավորման (Քասաղ, Եղվարդ, Երերուք, Աշտարակ, Ծիծեռնավանք), մի մասը զմբեթավորվում է քրիստոնեության մուտքի հենց սկզբնական դարերում (Տեկոր, որը և դառնում է Հայաստանի առայժմ մեզ հայտնի անդրանիկ զմբեթակիր կառուցվածքը), իսկ մի մասի նախնական կառուցվածքը հիմնովին վերակառուցվելով զմբեթավորվում է արդեն 7-րդ դարում (Դվին, 608—628 թթ.)[1]: Նշանակում է քրիստ. մուտքի առաջին դարերում բազիլիկաները ունենալով պարզ կառուցվածք, տարբեր ժամանակներում ստացել են տարբեր հավելումներ:

Նախնական պարզ կոմպոզիցիան սկզբնական շրջանում հավելումների նկատմամբ գտնվելով ոչ օրգանական միասնության մեջ (Քասաղ), աստիճանաբար միաձուլվելով նրանց՝ ընդունել է կոմպակտ տեսք (Աշտարակ) և ապա տարածական նոր ձևերի ներդրման հետևանքով (զմբեթի հավելումը Տեկորում) հանդես եկել իբրև ճարտարապետական նոր՝ առավել բարդ կոմպոզիցիա—զմբեթակիր բազիլիկա (Օձուն, Գայանե 630 թ., Բագավան 631/639 թթ., Մրեն 639/640 թթ. և այլն):

Որպես քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկային (եռանավ և միանավ) կառուցվածքների օրինաչափ զարգացման արգասիք, մի այլ ճյուղով ստեղծվել է «զմբեթավոր սրահի» ուշագրավ կերպարը (Պտղնի՝ 6-րդ դար, Արուճ՝ 7-րդ դար)[2], իսկ մի ուրիշ ղծով ժամանակի կենտրոնազմբեթ կառուցվածքների ազդեցությամբ հիմք է հանդիսացել եռարսիդ կառուցվածքների յուրահատուկ կոմպոզիցիային (Դվին՝ 7-րդ դար, Թալին՝ 7-րդ դար):

Նույնիսկ հայկական ճարտարապետության ծաղկման հաջորդ ժամանակաշրջանում, Անիի հրաշակերտ կառուցվածքների միջավայրում բարձրացված ժամանակի մայր տաճարի վեհաշուք կերտվածքը ստեղծվեց հիմնականում իբրև զմբեթակիր բազիլիկա:

Հետևապես բազիլիկաների նախնական պարզ կառուցվածքը աստիճանաբար կազմավորվելով ոչ միայն հասել է այդ տիպի առավել բարդ կերպարին, այլև զարգացման տարբեր ճանապարհներով հիմք հանդիսացել հայկական կլասիկ ճարտարապետության մեջ կերտված մի քանի նոր տիպերի ստեղծման համար:

* * *

Հայաստանի բազիլիկային կառուցվածքների կազմավորումն ու նրանց հետագա զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ դրանց մի մասը՝ ի դեմս իրենց սկզբնական առավել պարզ կառուցվածքների հասնում են մինչև քրիստոնեության մուտքի առաջին դարերը: Այդ կառուցվածքներից մի մասի, ավելի հնագույններում, ակնառու կերպով երևում է ճարտարապետական երկու հիմնական շրջան: Այսպես, Քասաղի սկզբնական կոմպոզիցիան թե իր ներքին կառուցվածքով (հատակագծի 1:2 համաչափություն, ներքին կոմպոզիցիայի հիմնական մասը հանդիսացող՝ գլխավոր նավի համաչափություններն ու կառուցողական սկզբունքը) և թե արտաքին տարածական ծավալային հորինվածքով (գլխավոր ճակատի համաչափությունները, ճակատոնի անտիկ ճարտարապետությանը հատուկ կառուցման եղանակը, մանրամասների մշակումները և այլն) որոշակիորեն առնչվում են անտիկ շրջանի ճարտարապետական արվեստի հետ: Իսկ տաճարին հետագայում ավելացված մասերը (այժմյան արսիդը, արտաքին սյունասրահը, շքամուտքերի սյունազարդ կառուցվածքները, լուսամուտների պսակները, ճակատաքարի զարդաքանդակները և այլն) քրիստոնեական վաղ շրջանի արվեստի հետ:

---

[1] Վրաստանում հնագույն բազիլիկներից հետագայում զմբեթավորվում է Ցքարոթավին, Ш. Я. Амиранашвили. История груз. иск., 104:

[2] Նման տեսակետ հայտնել է նաև Վ. Հարությունյանը (По поводу датировки храма в Аруче, Ереван. 1946. 19):

Այդ հավելվածքներն են, որ ակնհայտորեն առնչվում են քրիստոնեական վաղ շրջանի ինչպես սիրիական, փոքր ասիական, այնպես էլ Հայաստանին հարևան մյուս երկրների նույն ժամանակաշրջանի համանման կառույցվածքներին։

Հետևապես տաճարին հետագայում ավելացած մասերը, որոնց կառույցումները տեղի են ունեցել քրիստոնեության մուտքի առաջին դարերում (4—5-րդ դդ.), որոշակիորեն առնչվում են նույն ժամանակաշրջանի համանման կառույցվածքների ճարտարապետական արվեստին, իսկ սկզբնական կառույցվածքը, որ ստեղծվել է մինչև այդ հավելումները, հեռանալով այդ ժամանակաշրջանից, մոտենում է անտիկ շրջանի ճարտարապետական արվեստին։

Նույն երևույթը ակնառու է նաև Երերույքում, Տեկորում, Դվինում և այլն։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ հուշարձանների սկզբնական պարզ կառույցվածքները գոյություն են ունեցել տեղում ավելի շուտ, քան քրիստոնեության վաղ շրջանում սիրիական և փոքր ասիական ճարտարապետության մեջ ստեղծված հիշյալ ընդհանրության առաջացումը։

Ուշագրավ այն է, որ այդ նախնական պարզ կառույցվածքները ոչ թե հապճեպ կառույցված, պրիմիտիվ շեներ են, այլ, ինչպես ցույց է տալիս նրանց կառուցողական միասնական սկզբունքը (մոդուլային սիստեմը), դարգացման բարձր աստիճանի վրա դրված ճարտարապետության արդասիք։

Արդ, հարց է ծագում, այդ նախնական պարզ շենքերը, որոնք հասնում են մինչև քրիստոնեության մուտքի առաջին դարերը (հետևապես հանդիսանում են քրիստոնեական պաշտամունքի հայկական անդրանիկ կառույցվածքները) տեղում ստեղծվելու ինչ նախադրյալներ ունեին։ Ըստ մատենագրական վկայությունների քրիստոնեական պաշտամունքի հայկական անդրանիկ տաճարները կառուցելիս, կամ բոլորովին ավերում էին հեթանոսական տաճարը և նույն տեղում կառուցում նոր պաշտամունքի կառույցվածք[1], կամ օգտագործում էին հեթանոսական տաճարի հատակագծային կոմպոզիցիան և հեթանոսական տաճարի հիմքերի վրա բարձրացնում նոր պաշտամունքի կառույցվածք[2], կամ առանձին դեպքերում, ուղղակի հեթանոսական տաճարը «սրբագործելով» փոխարկում քրիստոնեականի[3]։ Հիշատակվում է անգամ, որ քրիստոնեական եկեղեցու համար օգտագործված հեթանոսական տաճարի հատակագիծը ունեցել է ուղղանկյուն ընդերկայնական հորինվածք և միայն սեղանը, որը դտնվել է շենքի արևմտյան կողմում քրիստոնեականի փոխարկման ժամանակ տեղափոխվել է արևելք[4]։

Դժվար չէ նկատել, որ ճիշտ նման ձև ունեն քրիստոնեական վաղ շրջանի վերը հիշատակված հուշարձանների հատակագծային սկզբնական կառույցվածքները։

Նշանակում է, քրիստոնեական պաշտամունքի հայկական անդրանիկ կառույցվածքների մի մասը հանդիսացել են հեթանոսական նախկին տաճարներ, մի մասը կառուցվել է հեթանոսական տաճարների հիմքերի վրա, իսկ մի մասը՝ կառուցվելով քրիստոնեական եկեղեցու անդրանիկ կոմպոզիցիայի համար արդեն ընդունված հեթանոսական տաճարների այդ միջավայրում, բնականաբար հանդիսացել են նրանց ազդեցությամբ ստեղծված նորակառույցներ։

Ուրեմն, բացառված չէ անգամ, որ քրիստոնեական վաղ շրջանի վերը հիշատակված պարզ կառույցվածքների մի մասը հանդիսանան՝ կամ տեղում գոյություն ունեցած նախաքրիստոնեական տաճարներ, կամ առնվազն, տեղական այդ կառույցվածքների միջավայրում ստեղծված ու հիմնականում նրանց կերպարը ունեցող նորակառույցներ։

Այսպիսով, Հայաստանի բազիլիկային կառույցվածքների մի մասը գոյություն ունենալով դեռ քրիստոնեության մուտքի սկզբնական շրջանում, իրենց նախնական պարզ կառույցվածքներով, որոշակիորեն կապվում են տեղում գոյություն ունեցած նախաքրիստոնեական շրջանի արվեստի հետ։

Նախնական այդ պարզ ձևերը, շուրջ երեքհարյուր տարի աստիճանաբար ստանալով տարբեր հավելվածքներ, հասել են այդ տիպի առավել բարդ հորինվածքին։

---

[1] Ակաթանղեղայ, Պատմ. հայոց, Թիֆլիս, 1914, 398, 399, 425 և այլն։

[2] Զենոբ Գլակ, Պատմութիւն Ցարօնոյ, Վենետիկ, 1889, 33—35։

[3] Բիւզանդ, Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, 7, նույն վկայությունից նման հետևություն արել է նաև Թ. Թորամանյանը «Նյութեր...», հ. I, 209։

[4] Զենոբ Գլակ, Պատմութիւն Ցարօնոյ, Վենետիկ, 1889, 33—35։

Քրիստոնեական կրոնի տարածման հետևանքով՝ սիրիական, փոքր ասիական, հայկական, ինչպես և ընդհանրապես կովկասյան ժողովուրդների՝ տվյալ շրջանի ճարտարապետության մեջ առաջացած ընդհանրությունը, հիմնականում վերաբերվում է հենց այդ հավելված քներին։

Հետևապես, տեղական կառուցվածքների բազայի վրա ստեղծված քրիստոնեական եկեղեցու նախնական պարզ կոմպոզիցիայից—առավել բարդի անցման շրջանում է, որ հայկական ճարտարապետությունը շփման մեջ է մտնում քրիստոնեական կրոնը ընդունած հարևան ժողովուրդների՝ առաջին հերթին սիրիական ճարտարապետության հետ։

Հետագա շրջանում, ժողովրդի շինարար—ստեղծագործական միտքը սկսում է որոնել ճարտարապետական նոր իդեաներ ու ձևեր, ոչ թե այն պատճառով, որ իբրև թե այդ կառուցվածքները «ստարոտի են»[1], այլ ժամանակի սոցիալ-տնտեսական նոր պայմանները առաջացրել էին ճարտարապետական նոր մտահղացումների անհրաժեշտություն։ Ընդորում, ճարտարապետական նոր իդեաների ծնունդը ու նրանց զարգացումը ոչ միայն պայմանավորված էր նաև մինչև նրանց հանդես գալը, նույն վայրում գոյություն ունեցած հենց այդ բազիլիկային կառուցվածքների առկայությամբ, այլև բազիլիկային այդ կառուցվածքներն իրենց զարգացման տարբեր ճանապարհներով հիմք հանդիսացան ճարտարապետական մի շարք նոր՝ առավել բարդ տիպերի ստեղծման համար։

Այսպիսով, Հայաստանի բազիլիկային կառուցվածքների ուսումնասիրության նյութերը ոչ միայն ժխտում են այդ հուշարձանները դրսից ներմուծելու՝ Մառի ու նրան կրկնողների միանգամայն սխալ տեսակետները, այլև հաստատում ինչպես քրիստոնեության մուտքի հենց սկզբնական շրջանում, այնպես էլ մինչ քրիստոնեության մուտքը Հայաստանում զարգացած տեղական ճարտարապետության գոյությունը։

Բազիլիկային այդ կառուցվածքների կազմավորման ու նրանց հետագա զարգացման բազայի վրա էր, որ ըստ էության բարձրացավ հայկական կլասիկ ճարտարապետությունը։

---

[1] Դժբախտաբար վրացական այս շրջանի կառուցվածքների վերաբերյալ, բացի պրոֆ. Զուբինաշվիլու «Բոլնիսի Սիոնը» արժեքավոր աշխատությունից, այլ հատուկ ուսումնասիրություններ չկան, սակայն, ինչպես ցույց են տալիս առանձին հուշարձանների օրինակները (Ցքարոսթավի) կազմավորման համանման պատկեր, անշուշտ պետք է գոյություն ունենա նաև Վրաստանում։

[2] А. Л. Якобсон, Նույն տեղում, 17։